ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1965 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

1965 թ. մայիսի 6-ին տեղի ունեցավ ՍՄԿՊ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի և Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի համատեղ հոբելյանական գիտական նստաշրջան, որը նվիրված էր գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ Հայրենական մեծ պատերազմում (1941—1945 թթ.) սովետական ժողովրդի տարած պատմական հաղթանակի 20-ամյակին։

Նստաշրջանը բացեց ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ, պրոֆեսոր Մ. Պ. Աղայանը։ Մասնակիցները հոտնկայս հարգեցին Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակը։ Այնուհետև, զեկուցումներով հանդես եկան մի շարք պատմաբաններ և զինվորականներ։

«Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած հաղթանակի պատմական նշանակությունը» թեմայով հանդես եկավ Սովետական Միության կրկնակի հերոս Դ. Ա. Դրագունսկին։ Հենվելով պատմական փաստերի վրա, նա մանրամասն կանգ առավ Հայրենական մեծ պատերազմի էտապների, ուժերի հարաբերակցության, հաղթանակի աղբյուրների, պատերազմի տված դասերի և այլ հարցերի վրա։ Դ. Ա. Դրագունսկին բարձր գնահատեց հայ ժողովրդի ակտիվ մասնակցությունը Հայրենական պատերազմում, դրվատանքի խոսք ասաց նրա հերոս զավակների, այդ թվում Սովետական Միության հերոսներ, նավատորմի ծովակալ Ի. Ս. Իսակովի, Սովետական Միության մարշալ Հ. Ք. Բաղրամյանի, Սովետական Միության կրկնակի հերոս, փոխգնդապետ Ն. Գ. Ստեփանյանի և շատ ուրիշների, ինչպես նաև ներկայումս բանակում ազնվորեն ծառայող բազմաթիվ հայ երիտասարդների մասին։

Արխիվային վարչության պետ, գվարդիայի պահեստի գնդապետ Ա. Հ. Հարությունյանը, «Հայրենական մեծ պատերազմի պատմության բուրժուական կեղծարարները» զեկուցման մեջ մերկացրեց բուրժուական պատմաբաններին, առաջին հերթին անգլիական և ամերիկյան բուրժուական պատմաբաններին, որոնք ենթագիտելով պատմության իսկությունը, աշխատում են նսեմացնել հաղթանակի մեծ գործում կարմիր բանակի և սովետական ժողովրդի խաղացած վճռական դերը։

Պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատող Ս. Խարմանդարյանը «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում» զեկուցման մեջ, խոսելով Հայրենական պատերազմին հայ ժողովրդի ընդհանուր մասնակցության մասին, ցույց տվեց այն բոլոր դժվարությունները ու զրկանքները, որ կրեց սովետական ժողովուրդը պատերազմի ընթացքում և որոնց հաղթահարմամբ նա հասավ հաղթանակի։ Ապա ընդհանուր ֆոնի վրա զեկուցողը լուսաբանեց Հայաստանի աշխատավորության կատարած հերոսական աշխատանքը և նրա ներդրած ավանդը հաղթանակի գործում։ Այնուհետև, խոսելով ռազմաճակատի տարբեր հատվածների մարտական գործողությունների մասին, Խարմանդարյանը լուսաբանեց հայ զորավարների, Սովետական Միության հերոսների և ընդհանրապես հայ ռազմիկների ունեցած մասնակցությունն այդ գործողություններին։

Պատմության ինստիտուտի Հայրենական պատերազմի կաբինետի վարիչ Ե. Մ. Խալեյանը զեկուցեց Հայրենական պատերազմում պարտիզանական և դիմադրական շարժմանը մասնակցած հայ ժողովրդի զավակների մասին։ Նա կանգ առավ գերմանական համակենտրոնացման ճամբարներում գտնված և ճամբարներից փախած սովետական հայ ռազմագերիներից ստեղծված ընդհատակյա կազմակերպությունների, պարտիզանական ջոկատների և նրանց ակտիվ անդամների գործունեության վրա։ Դրանցից շատերը ընկան հերոսի մահով, բայց հավատարիմ մնացին հայրենիքին և իրենց երդմանը։ Ընդհատակյա հայ գործիչներից ամենափայլուն դեմքը Նյուրնբերգի քաղաքական կալանավորների բանտում, 1942 թ. ապրիլին գեստապոյականների կողմից գնդակահարված, 1917 թվականից պարտիայի անդամ, 113-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Քրիստափոր Ալավերդյանն էր։

Ռազմագերիների հայ ընդհատակյաների մեջ Ալավերդյանը եզակի օրինակ չէր։ Պատերազմի պայմաններում հանդես եկան տասնյակ հմուտ կազմակերպիչներ, այդ թվում և Ա. Ղա-

զարյաններ, Ս. Հարությունյաններ, Բ. Պետրոսյաններ, Ա. Հովսեփյաններ, Ա. Սաղումյաններ, Վ. Առաքելյաններ և շատ ուրիշներ։

Նստաշրջանի մասնակիցները մեծ հետաքրքրությամբ լսեցին «Ֆրանսիական կոմպարտիայի հայկական սեկցիայի գործունեությունը դիմադրության շարժման տարիներին» զեկուցումը։ Զեկուցող Տ. Դրամբյանը հակիրճ, բայց համոզիչ փաստերով տվեց ֆրանսիական կոմպարտիայի հերոսական գործունեությունը դիմադրական շարժման և Ֆրանսիայի ազատագրման պայքարում։ Ապա ֆրանսիական աղբյուրների հիման վրա լուսաբանեց այդ պայքարում իր արժանի ավանդը ներդրած հայկական սեկցիայի և նրա գլխավորությամբ ստեղծված հայ ազգային ճակատի և հայրենասեր հայ երիտասարդական միության կազմակերպության գործունեությունը։ Զեկուցման մեջ հատուկ բաժին էր հատկացված Ֆրանսիայում գործող առաջին պարտիզանական հայկական գնդի գործունեությանը։ Զեկուցողը միաժամանակ մերկացրեց «Դաշնակցություն» կուսակցության հակաժողովրդական վարքագիծը համաշխարհային երկրորդ պատերազմում և հատկապես Ֆրանսիայի ազատագրման գործում։

«Հայրենական մեծ պատերազմի պատմագրությունը» թեմայով հետաքրքիր զեկուցում կարդաց պատմական գիտությունների դոկտոր Խ. Հ. Բարսեղյանը։ Զեկուցողը քննության առավ Հայրենական մեծ պատերազմի պատմության վերաբերյալ Սովետական Միությունում հրատարակված մի շարք մենագրություններ, փաստաթղթերի բազմաթիվ ժողովածուներ, հոդվածներ և այլն։ Հրատարակված պատմագիտական ողջ գրականությունը նա բաժանեց երկու մասի՝ մինչև ՍՄԿՊ XX համագումարը և այդ համագումարից հետո հրատարակված աշխատություններ։

Զեկուցման մեջ հատուկ տեղ էր հատկացված սովետահայ պատմագրությանը։ Խ. Բարսեղյանը նշեց, որ սովետահայ պատմաբանների այդ աշխատություններում «բացահայտվում է Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի ունեցած մասնակցությունը, պատմվում են կարմիր բանակի հայկական առանձին զորամիավորումների, դիվիզիաների մարտական գործողությունների, հայ պարտիզանների, Եվրոպայի երկրների օկուպացված շրջանների ժողովուրդների դիմադրական շարժմանը հայերի ցուցաբերած մասնակցության, թիկունքի հերոսական աշխատանքի, ռազմաճակատում Հայաստանի զավակների կատարած քաջագործությունների, պատերազմի ժամանակ սովետական հայրենիքի պաշտպանությանը սփյուռքահայերի ցույց տված օգնության մասնակցության մասին»։

Նստաշրջանում ուշագրավ հուշերով հանդես եկավ Մոսկվայի պաշտպանության և Արևմտյան Պրուսիայի համար մղված մարտերի ակտիվ մասնակից գեներալ-մայոր Հայկ Մարտիրոսյանը։

Հոբելյանական նստաշրջանն ամփոփեց պատմության ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Ա. Գալոյանը։

Ք. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

Սովետական Հայաստանի աշխատավորությունը երախտագիտության խորին զգացումով նշեց իր մեծանուն զավակներից մեկի՝ բազմավաստակ հայագետ ակադեմիկոս Մանուկ Աբեղյանի ծննդյան հարյուրամյա տարելիցը։ Մայիսի 25-ին հանդիսավոր նիստ տեղի ունեցավ Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում, կուսակցության և կառավարության ղեկավարների, մտավորականության, աշխատավորների ներկայացուցիչների մասնակցությամբ։

Հանդիսավոր նիստը բացեց Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի փիցե-պրեզիդենտ Մկրտիչ Ներսիսյանը։ Նա նշեց այն խոշոր դերը, որ խաղացել է Մանուկ Աբեղյանը հայագիտության և հայկական մշակույթի զարգացման գործում՝ 20-րդ դարի առաջին հինգամյակում։ Բազմակողմանի, բեղմնավոր ու արդյունավետ է եղել մեծանուն գիտնականի և մեկնաբանչի ու անաչառ քաղաքացու գործունեությունը։

Մանուկ Աբեղյանը հսկայական աշխատանք է կատարել,— ասում է ակադեմիկոս Մ. Ներսիսյանը,— հայոց լեզվի ինչպես տեսական, այնպես էլ գործնական մշակման ուղղությամբ, քննել և պարզաբանել աշխարհաբար լեզվի հնչյունական համակարգի, շարահյուսության ու տեսության բազմապիսի խնդիրներ։ Ժամանակակից հայոց լեզվի քերականությունը նրա ստեղծագործ ջանքերի արդյունքն է հանդիսանում։ Մանուկ Աբեղյանի հայացքը սնված է եղել միշտ դեպի նորը, առաջադիմականը, որին ծառայել է նա իր գիտական օբյեկտիվությամբ, սկզբունքայնությամբ, երկաթյա տրամաբանությամբ և գիտելիքների անսրինակ պաշարով։